ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի «Հանրաքվեի որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի բարելավման արդի հիմնահարցերը» ԺԲ. 00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության մասին

Ատենախոսության թեմայի արդիականությունը հեղինակը հիմնավորում է այն հանգամանքով, որ «անմիջական ժողովրդավարությունը մեր օրերում ձեռք է բերել աննախադեպ մեծ պահանջարկ» և դրա «պակասը ծնում է պետական իշխանության անվերահսկելիության ու անպատասխանատվության կայուն և պայթունավտանգ մթնոլորտ… »։ Մինչդեռ այդ ինստիտուտի լիարժեք իրացման համար դեռևս չեն ձևավորվել անհրաժեշտ իրավատեսական հիմքերը (Ատենախոսություն էջ 4-5)։

Իհարե կարելի է վիճարել պետական կառավարման ոլորտում անմիջական ժողովրդավարության ինստիտուտների դերի այդպիսի չափազանցումը։ Սակայն մեզանում ընթացող սուր քաղաքական բանավեճերը միանշանակ վկայում են ատենախոսության թեմայի արդիականության մասին։

Աշխատանքի գիտական նորույթը պետք է պայմանավորել հենց այդպիսի իրավատեսական հիմքերի ձևավորման, լրամշակման և կոնկրետացման անհրաժեշտությամբ։

Ատենախոսի կողմից օգտագործվել են թեմայի հիմնախնդրի հետ առնչվող հայրենական և արտասահմանյան տեսական գրականությունը, ՀԽՍՀ , ՀՀ և մի շարք այլ պետությունների սահմանադրություններ և այլ նորմատիվ-իրավական ակտեր։

Աշխատանքում ուշադրություն է հատկացվել հանրաքվեի սոցիալական և իրավական բաղադրիչների հետազոտմանը, ժամանակակից աշխարհում հանրաքվեի ինստիտուտի դերի և նշնակության գնահատմանը, հանրաքվեի որպես ամիջական

ժողովրդավարության ձևի արդյունավետության չափանիշների հիմնախնդրին, ինչպես նաև հանրաքվեների դասակարգման և դրանց հիմնական տեսակների վերլուծությանը։

Ատենախոսի կողմից սկզբունքորեն ճիշտ են տարանջատվել Հայաստանի Հանրապետությունում համապետական հանրաքվեի ինստիտուտի օրենսդրական ամրագրման հիմնական փուլերը։ Մանրմասն քննարկվել են այդ ոլորտի հարաբերությունների օրեսդրական կարգավորման առանձնահատկությունները 1990-1995 թ.թ., ինչպես նաև ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ և 2005 թ. սահմանադրական փոփոխություններով։

Գրախոսվող աշխատանքում պատշաճ ուշադրություն է հատկացվել նաև հանրաքվեի ինստիտուտի հետագա զարգացման հիմնախնդիրներին 2015 թ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում։ Մանավորապես, հեղինակը մանրամասնորեն քննարկել է 2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում հանրաքվեի կազմակերպան և անցկացման հետ կապված հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները, և այդ ինստիտուտի հետագա զարգացման հիմնախնդիրներին։

Վերը նշվածը հիմք է տալիս հիմնականում դրական գնահատելու պաշտպանության ներկայացված թեզը։

Միևնույն ժամանակ աշխատանքում տեղ են գտել էական թերություններ.

1. Աշխատանքը հիմնականում կրում է զուտ վերացական-տեսական, նույնիսկ հրապարակախոսական բնույթ։ Հեղինակի դիրքորոշումները և եզրահանգումները հաճախ զուրկ են համապատասխան հիմնավորումներից։ Այսպես՝ հեղինակի պնդմամբ. Հայաստանում համաժողովրդավարական շարժումը առաջադրեց այնպիսի ինքնատիպ պահանջներ, որոնք որևէ կերպ չեին կարող իրենց համարժեք լուծումը գտնել առկա քաղաքական-իրավական համակարգի գործադրմամբ (Ատենախոսություն, էջ 4)։ Այս դիրքորոշման հետ կարելի էր համաձյնվել միայն այն դեպքում, եթե ատենախոսը կոնկրետ օրինակներով ցույց տար, որ այդ ինքնատիպ պահանջները համապատասխանում էին ժողովրդավարության սկզբունքներին և առկա համակարգը ի վիճակի չէր լուծել հենց այդպիսի՝ ժողովրդավարական սկզբունքներին համապատասխանող պահանջները։ Մինչդեռ, չի բացառվում, որ հենց այդ պահանջները չէին

համապատասխանում ժողովրդավարության պահանջներին։ Մեկ այլ օրինակ՝ ատենախոսը հայտարարում է, որ ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը աչքի էր ընկնում ակնհայտ թերություններով (էջ 107)։ Թերևս՝ հեղինակը պետք է կոնկրետ օրինակներով ապացուցեր իր գրածի ճշմարտացիությունը, կամ եթե նա գտնում է, որ դա իր հետազոտության առարկայից դուրս է, ապա պետք է զերծ մնար այդպիսի մերկապարանոց հայտարարություններից։

2. Ատենախոսը նշում է, որ հետազոտությունը ունի երկմիասնական բնույթ և առանձնացնում է երկու ենթանպատակ։ Թերևս ճիշտ կլիներ, որ նախ ձևակերպվեր հետազոտության նպատակը։
3. Հակասական են ատենախոսի տեսակետները հանրաքվեի՝ որպես սոցիալական ինստիտուտի և հանրքվեի՝ որպես իրավական ինստիտուտի հարաբերակցության մասին։ Հիմք ընդունելով այն անվիճելի դրույթը, որ իրավական ինստիտուտը կարող է կայանալ միայն նորմատիվ իրավական կարգավորման դեպքում, որի միջոցն է նորմտիվ իրավական ակտը, հեղինակը ճշմարտացիորեն նշում է, որ հանրաքվեն որպես սահմանադրաիրավական ինստիտուտ սկիզբ է առնում սահմանադրությունների առաջացման պահից։ Սակայն հիմնվելով այդ անվիճելի (նույնիսկ՝ պարզունակ) դրույթների վրա ատենախոսը գալիս է այն պարդոկսալ եզրակացությանը, որ «որպես սոցիալական ինստիտուտ՝ հանրաքվեն ունի հազարամյակների պատմություն… որ հանրաքվեն ոչ թե պատմության նոր շրջանից սկիզբ առած իրավական ինստիտուտ է, այլ մարդկային հասարակության գոյությունն ուղեկցող սոցիալական ինստիտուտ» (էջ 23-24)։ Այլ կերպ՝ հանրաքվեն որպես իրավական ինստիտուտ առաջացել է նոր դարաշրջանում, իսկ որպես սոցիալական ինստիտուտ ունի դարերի պատմություն։ Ակնհայտ է, որ այս եզրակացության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ հեղինակը գործնականում չի տարբերակում իրավական և սահմանադրաիրավական հասկացությունները։ Ճիշտ է որպես սահմանադրաիրավական ինստիտուտ հանրաքվեն առաջացել է նոր ժամանակաշրջանում, սակայն որպես իրավական ինստիտուտ՝ որը ի սկզբանե կարգավորվում էր իրավական սովորույթների միջոցով հանրաքվեն նույնպես ունի դարավոր պատմություն՝ և կայացել է պետության

առաջացման հետ։ Այդ մասին է վկայում ատենախոսության նույն 1.2 բաժնում շարադրված նյութը։

4. Ատենախոսի կարծիքով՝ ի տարբերություն այլ երկրների, Հայաստանում հանրաքվեի ինստիտուտը սակավ է կիրառվում, այդ թվում այն պատճառով, որ մեր օրենսդրության մեջ կան քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի անցկացման խոչընդոտներ, ամրագրված են հանրաքվեների բնականոն ընթացքը խաթարող հիմքեր։ Մանավորապես, սահմանված է հանարքվեների ներկայացվող հարցերի վերաբերյալ իշխանության մարմինների կողմից հստակ դիրքորոշում հայտնելու պարտադիր պայման (էջ 14-17 և այլն)։ Իհարկե ձևական (իրավական և քաղաքական) տեսանկյունից ատենախոսը ճիշտ է՝ հանրաքվեի դեպքում ժողովուրդ ինքն է անմիջականորեն որոշում իր ճակատագիրը։ Սակայն պետք է հաշվի առնել, որ հանրաքվեի արդյունքներով ընդունվում են կառավարչական որոշումներ, մասնավորապես, օրենսդրական ակտեր։ Իսկ իրավաստեղծ գործունեությունը դա ստեղծագործ մտավոր գործընթաց է, որ ենթադրում է պրոֆեսիոնալիզմ և բարձր ինտելեկտուալ հատկանիշներ, որոնք անհարժեշտ նախապայմաններ են հասարակության իրական շահերին համապատասխանող և արդյունավետ գործող որոշումների ընդունման համար։ Ակնհայտ, որ աշխատանքը էականորեն կշահեր, եթե հեղինակը դիտարկեր հանրաքվեի հետ առնչվող նաև այս տեսանկյունից։ Այդպիսի մոտեցումը հեղինակին զերծ պետական կառավարման հարցերի լուծման գործընթացներում հանրաքվեների դերի և նշանակության չափազանցումից։

5. Նյութը շարադրված է բարդ, դժվար ըմբռնելի կամ նույնիսկ անհասկանալի ոճով, աշխատանքում տեղ են գտել նաև մի շարք տեխնիկական թերություններ։

Այնուամենայնիվ Լիլիթ Վահեի Մելիքսեթյանի «Հանրաքվեն որպես ամիջական ժողովրդավարության ինստիտուտի բարելավման արդի հիմնահարցերը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը կատարված է պատշաճ մակարդակով, աշխատանքում տեղ են գտել մի շարք գիտական ընդհանրացումներ։

Հեղինակի գիտական հանդեսներում տպագրված հոդվածները և գիտական զեկույցները արտացոլում են աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև

պաշտպանության ներկայացված հիմնադրույթները: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների համար սահմանված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի

Ի.գ.դ., պրոֆ. Վ. Ստեփանյան

20.03.2020 թ.

Վ.Վ. Ստեփանյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Խաչիկյան
23.03.2020 թ.